

1. Աղայան

ԼԵԶՎԱԲԱՆ ՊՈՂՈՍ ՇՈՎԱՆՅԱՆ

Տասնիններորդ դարի առաջին կեսում ընդհանուր լեզվաբանության մեջ մեծ թիվում կատարվեց, մասկի, Երիմի ու Խոպպի աշխատությունները նոր հիմքերի վրա դրին լեզուների ուսումնասիրությունը։ Առանձնապես Խոպպի հանրահայտ աշխատությանը (Vergleichende Grammatik des Sanskrit, Zend, Armenischen, Griechischen, Lateinischen, Litauischen, Altislavischen, Gothischen und Deutschen) հիմնադրող համեմատական լեզվաբանությունը, Այնուհետև համեմատական մեթոդով սկսեցին քննության ենթարկել առանձին լեզուների բառապաշարն ու լեզվաբանական կազմը և երևան հանել տարբեր լեզուների միջև եղած նմանությունները։ Լեզուների փաստական նյութի ուսումնասիրությանը զուգընթաց լեզվաբաններն զբաղվում են նաև մարդկային լեզվի ընդհանուր-տեսական հարցերով, կամենալով վեր հանել լեզվի զարգացման օրինաչափությունները, գտնել տարբեր լեզուների զարգացման ընդհանուր օրենքները, դրանց պատճառները և այլն։ Այդ դործում առաջին և պատվավոր տեղը պատկանում է Վիլհելմ Վոն Հումբոլդտին։ յուր «Ueber die Kawisprache auf der Insel Java»¹ հատոր ուսումնասիրության հանրածանոթ առաջաբանում (Ueber die Verschiedenheit des menschlichen Sprachbaus und ihren Einfluss auf die geistige Entwicklung des Menschengeschlechts) Հումբոլդտը, քննության առնելով մարդկային լեզվի բազմազան կոդները, տալիս է այդ բարդ երևույթի խորը, փիլիսոփայական վերլուծությունը։ Դիտելով լեզուն յուր անընդհատ զարգացման ընթացքի մեջ, քննության առնելով մարդկային լեզուն իրրեզործունեություն (énérgeie), նա հայտարարեց լեզվի օրինաչափությունները, ցույց տվեց մարդկային լեզուների զարգացման ընդհանուր օրենքները և այդպիսով իսկ երևան հանեց լեզվի դիալեկտիկական զարգացումը։ Ո՛րչա՛ն է, նա ուսումնասիրում է լեզուն հեղեյան իդեալիստական դիալեկտիկայի հիմունքներով և լեզվական բոլոր երևույթները կապում բացարձակ ճշուհետ, բայց և այնպես նա էր առաջինը, որ ուսումնասիրեց լեզվի ընդհանուր փիլիսոփայական հարցերը, նա էր առաջինը, որ քննության առավ լեզուն իրրե բազմազան երևույթների բարդ կապակցություն՝ յուր պատմական զարգացման անընդհատ ընթացքի մեջ։ Եւր այդ ուսումնասիրությամբ Հումբոլդտը լեզվի փիլիսոփայության հիմնադիրը հանդիսացավ։

¹ Աշխատությունը լույս է տեսել հեղինակի մահվանից հետո՝ 1836—40 թվերի ընթացքում։

Լեզվարանության այդ աննախընթաց զարգացումը յուր արձագանքը գտավ նաև հայ իրականության մեջ: Անցյալ դարի առաջին կեսը նոր դարաշրջանի սկիզբն է նաև հայ լեզվարանության պատմության մեջ: Հետեւիւնով եւլրոպական գիտության, հայերն էլ խորամուխ են լինում թե՛ առանձնապես հայերեւելի և թե՛ լեզվի ընդհանուր, փիլիսոփայական հարցերի ուսումնասիրության մեջ: Հայ իրականության մեջ լեզվի փիլիսոփայության հիմնադիրն է Վիեննայի Մխիթարյան միարանության անդամ Հ. Պողոս Հոֆմանյանը, որին և նվիրված է սույն հոդվածը:

Հոֆմանյանը ծնվել է 1802 թվին, Պոլսում: Մանկույթը Վիեննայի Մխիթարյան միարանության մեջ, նա գրեթե յուր ամբողջ կյանքն անց է կացրել վանքում՝ նվիրված ուսուցանելու և ուսումնասիրելու անդուլ դրածին, Վախճանվել է 1884 թվին, Վիեննայում: Հոֆմանյանը գրել ու հրատարակել է շատ գրքեր, որոնցից կարելի է հիշել՝ «Պատմութիւն տիեզերական ժողովոց արևելեայց» (1847 թ.), «Պատմութիւն Իտալիոյ» (1864 թ.) և այլն: Սակայն մեզ հետաքրքրում է նրա մի լեզվաբանական աշխատութիւնը, որի վերնագիրն է. «Մարդկային լեզուին օկքքսն, Կանգամանաց, միութեան ու բաժանման և եզգային լեզուաց վրայ քննական տեսութիւն մը» (1857 թ.): Ինչպես ցույց է տալիս վերնագիրը, աշխատութիւնը կրում է ընդհանուր լեզվաբանական բնույթ. ութ գլուխների մեջ հեղինակը հանգամանորեն քննութիւն է առնում մարդկային նախամայր լեզվի գոյութիւնը, նրանից առաջացած լեզուների, ապա և՛ մեզ հայտնի հին լեզուներից առաջացած նոր, ազգային լեզուների գոյացմանն ու զարգացմանը վերաբերող տեսական հարցերը:

Առաջին խնդիրը, որ զբաղեցնում է նրան, մարդկության նախամայր լեզվի գոյութիւնը հարցն է. ինչպես հայտնի է, ըստ Աստվածաշնչի, մարդկութիւնն սկզբից ունեցել է մի լեզու. աստված, ստեղծելով մարդկության նախահայր Ադամին, ինչպես պատմվում է Աստվածաշնչում, տվել է նրան նաև լեզուն (Ծն. Ա, 5, 8, 10), իսկ Ադամն էլ, իր հերթին, տնուններ է գրել թռչուններին ու կենդանիներին, և այդպիսով ստեղծվել է մարդկության նախամայր, միասնական լեզուն (Ծն. Ի, 19 – 20): Այդ լեզուն իբրև թե գոյութիւն է ունեցել մինչև բաբելոնյան խառնակութիւնը, որից, հենց խառնակութիւնը հետևանքով, ստացվել են զանազան լեզուներ: Տասնիններորդ դարում, երբ լեզվաբանութիւնը գիտական հիմքերի վրա դրվեց, անշուշտ Աստվածաշնչի այդ առասպելն էլ հերքվեց լեզվաբանության կողմից: Սակայն հրաժարվելով աստվածաշնչոյն նախամայր լեզվի գոյութիւնն ընդունելուց, լեզվաբանները, այնուամենայնիւ, չհրաժարվեցին առհասարակ մարդկության նախամայր լեզվի գոյութիւնն ընդունելուց. առաջ քաշվեց այն տեսակետը, որ ցեղակից լեզուներն ունեցել են իրենց նախալեզուները (օր.՝ «հնդեւլրոպական նախալեզու», «սեմական նախալեզու» և այլն), իսկ այդ նախալեզուներն էլ իրենց հերթին առաջացել են մի նախամայր լեզվից:

Հոմանյանը, որ քննութիւն էր առնում լեզուների ծագման խնդիրը, անշուշտ պետք է անդրադառնար նախամայր լեզվի հարցին և անդրադառնում է, Սակայն այս խնդրում նա որոշ դժվարութիւն առջև է գտնվում: Նա վանական էր և այն էլ կաթոլիկ վանական. մի կողմից յուր կրօնական կոչումը, մյուս կողմից՝ պապական ցենզուրան նրան ստիպում էին,

դոնե առ ի ցույց, ընդունել Աստվածաշնչի առասպելը, մինչդեռ դիտու-
թյունը, որին հետևում էր ինքը, հակառակն էր թելադրում. և ահա Հոֆ-
մանյանը միջին ճանապարհն է բռնում, կամենալով հաշտեցնել զիտությու-
նը կրոնի հետ: Այսպես. խոսելով մարդկության նախնական լեզվի մասին,
նա ես, վերն ասվածի համաձայն, գտնում է. որ սկզբնապես մարդկու-
թյունը մի միասնական լեզու է ունեցել, իսկ այդ լեզուն էլ աստված է տվել
մարդուն. յուր կրոնական կոչմանը այս անհրաժեշտ տուրքը տալով, նա
դրում է. «Աշխարհքիս սկզբան մարդուն խոսելու սկսած ատենը հարկավորա-
պես մի միայն լեզու կար» (էջ 34): Բայց այս միայն սկիզբն է. այդ ան-
հրաժեշտ տուրքը տալուց, կրոնական հայրերի առջև իրեն արդարացնելուց
հետո, հեղինակը տալիս է յուր մեկնությունը. ըստ այդմ, սկզբից եղել է
մի լեզու, բայց այդ լեզուն զործնականապես աստված չի ստեղծել. աստված
մարդուն տվել է միայն խոսելու ձիրքը, կարողությունը, որպես մի բնա-
կան, ներքին ունակություն: Մարզն է, որ այդ ձիրքի շնորհիվ և աստծու
ազդեցությամբ, նրա անմիջական ներգործությամբ ու ոգու գաղտնի գո-
րությունը հորինել է յուր լեզուն. «Լեզուն ու խոսիլը մարդուն ստեղծման
ատեն իրեն իբր բանավոր արարածույն ամեն ժամանակ կարևոր ու սեփա-
կան ձիրք ու կարողություն մը բարեբար արարչեն իր բնությանը մեջ տրեկ-
վեցավ ու հաստատվեցավ» (էջ 25): Լեզուներն իրենց ծագումն ու հառա-
ջացումը հոգվույն անձամբ կամ գաղտնի (ի սկզբանե արարչին իրեն տրու-
ված) զորութենեն կառնեն. . . Լեզուն. . . ի մարդն հեղյալ գերբնական պար-
զե մը չէ, հապա իր բնական կարողութենեն հառաջ եկած ձիրք մը բանա-
կան՝ և ըստ դիտման արարչին եարկավոր ցերգործություն մըն է (էջ 21—
22): Ոստքը՝ մարդկային լեզվին կազմությունն ու անոր մեջ ամեն մարդ-
կային կենաց պատշաճ ըլլող հորինվածությունը կամ կապակցությունը մար-
դուն ստեղծման ատեն աստուծոյն ընդունած խոսելու կարողությամբ ցեր-
գործությունն է» (էջ 21): Ինչպես տեսնում ենք, հեղինակը լեզվի ծագումը
բառացիորեն այնպես չի ընդունում, ինչպես Աստվածաշնչում է պատմում.
ճիշտ է, նա ուղղակի կերպով չի ժխտում այդ պատմությունը, իսկ մի տեղ
էլ նույնիսկ վկայակոչում է Մենդոց գրքի հայտնի տողերը. բայց այդ բո-
լորը նրա մոտ միայն նախապայմանի արժեք ունեն. աստված մարդուն պար-
զեել է միայն խոսելու կարողությունը, միայն խոսելու ունակությունն է
մարդուն շնորհել, իսկ լեզուն ստեղծվել է հենց այդ ունակության զործաղը-
րությամբ, ուստի և լեզվի իսկական ստեղծագործողը մարդն է: Մարդն
աստուծոց ստացած այդ հատուկ առանձնաշնորհումով էլ բարձր է կանգնած
կենդանիներից. կենդանին ի բնե դուրկ է մտածելու և խոսելու «ձիրքից».
դրան հակառակ մարդ ի սկզբանե ունեցել է խորհելու և խոսելու աստվածա-
շնորհ ձիրքը. խոսելու ձիրքը մարդկային բնության սեփական հատկությունն
է և հետևարաբար՝ բնական ունակությունը. նա նույնքան բնական է և նույն-
քան անհրաժեշտ, որքան ուտելը, խմելը և այլն. «Ոստիլը մարդուն բնու-
թյանը մեջ հաստատված անանկ կարողությունն ու սեփականությունն մըն
է, որ մարդ աշխարհքիս արարածներուն մեջ իբրեւ ամենեն գերազույնն
ըլլալով՝ այն հատկությունն էր կրնար բնավ գուրկ մնալ. անիկա իր բնու-
թյանը գլխավոր սեփականությունններուն մեկը պետք էր ըլլալ, ինչպես ու-

¹ Ընդգծումները մերն են, Լ. Ա.:

տեղը, խմելն ու քնանալը... ամենարվեստ ու բարերար արարիչն որ աս արարածը բանավոր ու մասվոր ստեղծեց՝ հարկավորապես խոսելու ձիրք ալ պետք էր տալն (էջ 23—24)։ Մի կողմ թողնելով հասկածի կրոնական երանգավորումը, որ անշուշտ անհրաժեշտ տուրք է յուր կոչմանը, դժվար չէ գտնել այն կապը, որ կա Հոֆմանյանի սկզբունքների և Վիլհելմ Ֆոն Հումբոլդտի տեսություն միջև։ Հեղինակն, ըստ էության, ընդունում է լեզուն իբրև ոգու «անձանոթ» կամ «պաղտնի զորություն» արդյունք, մի բան, որ Հումբոլդտի տեսության հիմնական դրույթներից մեկն է կազմում։

Անցնելով ուղղակի լեզվի ստեղծման հարցին, հեղինակը միանգամայն ճիշտ կերպով բնորոշում է մարդկային լեզվի ծաղման նախապայմանը. այդ նախապայմանը մարդկային հասարակությունն է։ Լեզվի կարիքը այն ժամանակ միայն զգացվեց, այն ժամանակ միայն լեզվի ստեղծումն իրև անհրաժեշտություն հանդես եկավ, երբ մեր նախնիներն սկսեցին հասարակական կյանքով ապրել, երբ գոյություն առավ մարդկային հասարակությունը՝ ընկերությունը։ Հասարակական կյանքով ապրել սկսող մարդու համար լեզուն կենսական անհրաժեշտություն է. հասարակությունն առանց լեզվի չի կարելի պատկերացնել. «Ենկերությունն առանց խոսքի չի կրնար երեւակայվիլ։ Ընկերության մեջ ապրել սկսող մարդը պետք է որ իր սկսելու ատենը խոսելու կարողություն ունենար» (էջ 24)։ Այս ճիշտ դրույթից ելնելով էլ, ահա, հեղինակը կարողանում է որոշել մարդկային լեզվի բնույթը. մարդկային լեզուն հասարակության անդամների միմյանց հետ հաղորդակցելու, իրենց մտածություններն ուրիշներին հաղորդելու միջոցն է. լեզվի դրույթն է, նրա ստեղծման նախապայմանն էլ հենց մարդկանց՝ իրար հետ հաղորդակցելու պահանջն է. լեզուն ստեղծվել է «մտածություններն ու արտաքին նշաններով չերեցած զգացմունքը հայտնի բնութ» քստրելու համար։ Աս րացատրությունը մեկ մարդուն ներքին մտածությունն ու զգացմունքը մեկային հաղորդելու միջոց կամ միջնորդ մըն է» (էջ 15)։ Այստեղից էլ հեղինակը հանում է յուր հիմնական եզրակացությունը. եթե լեզուն մարդկանց՝ իրար հետ հաղորդակցելու միջոց է, եթե, իբրև այդպիսին էլ նա կարող է գոյություն ունենալ միայն մարդկային հասարակության մեջ, հետևաբար և լեզուն հաղորդակցման երևույթ է. հասարակությունից դուրս լեզու գոյություն ունենալ չի կարող. «Մարդկային ընկերությունից զատված ու անտառներու մեջ պատկուց ի վեր առանց մարդկային խոսք մը լսելու կյանք անյլնող մարդիկ չկին կրնար հողավոր ձայներ հանել ու խոսք մը ուղիղ արտաբերել» (էջ 16)։ Վերջապես մարդկային լեզուն, որպես հասարակական երևույթ, որպես մարդկանց «մտածությունների» արտահայտիչ, արտացոլում է յուր մեջ հասարակության հատուկ գիտակցությունը, հասարակության սովորությունների բովանդակությունը, էությունը. լեզուն պատմական երևույթ է. ինչպես հասարակությունը ենթակա է փոփոխման, այնպես էլ լեզուն փոփոխական է։ Սակայն լեզուն նույնիսկ յուր բոլորովին ալլափոխված վիճակում էլ պահպանում է զարձալ հասարակության անցյալ կյանքի մտածության տարրերը, արտացոլում յուր մեջ անցյալի երևույթները։ Լեզուն մարդկային կյանքի հիշատակաբանն է, նրանով կարելի է ուսումնասիրել մարդկային հասարակության պատմությունը. «Լեզու մը ուրիշ բան չէ. րայց եթե ազգի մը (կրնանք ըսել նաև՝ ընդհանուր մարդկային ազգին կամ ընկերության) հատուկ եզած սովորություն

նկրում բովանդակությունը՝ ամեն խորհուրդները կամ մտածություններն ու զղացմունքը հայտնի ընելու» (էջ 15) միջոց՝ «Ազդի մը ամեն պատմական հիշատակներն ու հիշատակարանները կորսված ըլլան, ու միայն լեզուն անկորուստ մնա»¹ բավական է իրրև նախնայոց հավատարիմ ավանդապահն ու կենդանի հիշատակարանը՝ հաջորդաց ու հևանոց իրենց ձայնն ու խոսքը հասցնելու» (էջ 118)։ Այսպես, ուրեմն, լեզուն, ինչպես ճիշտ կերպով բնորոշում է հեղինակը, հասարակական երևույթ է, լեզուն հաղորդակցման միջոց է, լեզուն՝ պատմական երևույթ, միշտ է, հեղինակը մարդկային հասարակությունը, մարդկանց համատեղ ապրելն էլ գիտում է իրրև բնական, նույնիսկ աստծու կողմից սահմանված մի բան։ Ինչպես խոսելու կարողությունն ի բնե աստծու կողմից տրված մի առանձնաշնորհում էր, այնպես էլ հասարակական կյանքով ապրելն աստծու կողմից նախասահմանված էր մարդուն։ Բացի այդ, ըստ Հոֆսանյանի, այդ մարդկային հասարակությունը նախապես բաղկացած է եղել երկու հոգուց՝ Ազամից ու Եվայից. «Ծանալանդ որ, (ինչպես աստուծո խոսքն ալ կցուցնե, որ ըստով²։ Ո՛հ է բարեք մարդոյ միայն լինել»), մարդուն ընկերական ըլլալն իր ստեղծման ատեն իրեն բնութագրող մեջ (իր) սահմանված (էջ 24)։ Ազամ իր բնածին բերմամբն աս (խոսելու։ է. Ա.) փափազը կատարելու համար իր լեզուն գործածելու՝ ներքին միտքն ու կամքը խոսքով ընկերին ալ հայտնելու սկսավ... և որովհետև առաջի մարդուն ընկերն ալ նույնպես բնածին կարողություն ուներ՝ ամեն բան մտքը բմբռնելու, հասկընալու, իր մտքին մեջ անոնց դաստիարակելու հարմարեցնելու և արտաքուստ նույնները հայտնելու ու խոսքով բացատրելու, անոր համար երկու կողմանե լեզուն բանեցնելով՝ իրենց խորհուրդները սկսան իրարու հաղորդել» (էջ 27)։ Սակայն այս հայացքը՝ հասարակության նկատմամբ, բոլորովին էլ չի նսեմացնում վերը ասվածներին արժեքը. մեղ համար կարևորն այստեղ՝ լեզվի ճիշտ բնորոշումն է. ինչ վերաբերում է հասարակության մասին ունեցած նրա հասկացողության, ապա այդ նրա փոխոգայական հայացքներին արդյունքն է, և մենք ամենևին էլ մտադիր չենք վերադրել նրան հասարակության արդիական, մատերիալիստական ըմբռնումը։ Ինչպես վերն՝ ասացինք, հեղինակն աշխատում է գիտությունը հաշտեցնել կրոնի հետ, և, շարադրելով իր սկզբունքները լեզվի ու նրա ծագման մասին, հաճախ կրոնական երանգավորում է տալիս դրանց. սակայն այդ կրոնականը մի կողմ թողնելով, մենք գտնում ենք նրա մոտ լեզվի այն բնորոշումը, որ համապատասխանում է յուր ժամանակի եվրոպական գիտության՝ լեզվաբանության մեջ իշխող սկզբունքներին, հատկապես՝ Հումբոլդտի տեսությունը։ Բայց հեղինակն էլ ավելի հեռանում է կրոնից, երբ, հենց աստվածային ներգործության արդասիր համարելով լեզուն, անմիջապես ավելացնում է, թե լեզուն հորինվել է մարդու կողմից. լեզուն ի սկզբանե անտի եղած մի երևույթ չէ. նա մարդու ստեղծագործությունն է. իրրև այդպիսին նա պատմական երևույթ է և ենթակա է անընդհատ փոփոխությունների. մարդիկ հորինում են իրենց լեզուն ու մարդիկ էլ փոփոխում են այն. բայց ինչպես մարդիկ ստեղծում են այն ոչ նախա-

¹ Հմա Գրիմի խոսքերը. «Ոսկրներից, զենքերից ու թաղամքներից ավելի կենդանի վկայություն կա մոլորությունների մասին՝ դրանց լեզուն»։

² Մուսնոք, է. 18։

պես խորհրդածելով ու խորհրդակցելով՝ թե ինչ կերպով ստեղծեն այն, այդպես էլ նրանք փոփոխում են այն, առանց մտածելու և որոշելու, թե ինչու են փոփոխում և ինչպես։ Մարդկային ազգը բնական հարկավորության ու իր բնության համեմատ լեզուն ամեն եիմնական ձեռքովն ու ետ-րաբերութլունցներովը կեռրիցե ու կիսութի։ Ամեն գլխավոր առանձին լեզու իր նախնական ու անխառն մաքրութլյանը մեջ իր կերպարանացը կամ ձե-վոցն արեեստական եռրինված մրն է. և այս հորինվածն արտադրող կամ կազմող անձինքն ոչ անոր օրենքն ու կանոններն ուսմամբ սորված են ու ոչ խորհրդածութլյամբ բնութած իրենց սեփականած են, հասկա առանց օրենք մը մտածելու կամ գիտնալու բնական ազդմամբ արտադրած են» (էջ 31)։

Մարդկային լեզվի մասին այս ընդհանուր, հիմնական սկզբունքները տալուց հետո հեղինակն անցնում է առանձին լեզուներին ու քննում նրանց առաջացման հարցը։ Ինչպես սկզբից մարդկութլյան մի նախամայր լեզու ունենալու խնդրում ընդունում է Աստվածաշնչի պատմութլունը. այն-պես էլ այստեղ՝ այսպես կոչված մայր կամ նախամայր լեզուների առաջաց-ման հարցը լուծում է ըստ Աստվածաշնչի։ Նա պատմում է, որ նախնա-կան լեզուն գոյութլուն է ունեցել մինչև քաբելոնյան խառնակութլունը. այդ խառնակութլունից առաջացան տարբեր լեզուները. բայց, չնայած խառ-նակութլյանն ու դրանից առաջացած լեզուների այլազանութլյան, բազմա-թիվ լեզուների միջև եղած տարբերութլուններն այն աստիճանին չհասան, որ նրանց միջև եղած նմանութլունները գտնել հնարավոր չլիներ. բանի որ բոլոր լեզուներն էլ ծագել են մեկից, ուստի և որքան էլ նրանք տար-բերակված լինեն իրարից, այնուամենայնիվ իրենց մեջ պահել են երեքնի նույնութլյան հետքերը. մի լեզվից բոլորովին տարբեր, ոչ մի բանով իրար մեջ նմանութլուն չունեցող լեզուների առաջացումն անկարելի բան է. «Բո-լորովին այլ և այլ (մեկ գմեկե էութլյամբ տարբեր) լեզուներ դուրս ելլելը՝ կարելի չէ. վասնզի թե որ ասանկ եղած ըլլար՝ աշխարհքիս վրա գտնվող ամեն մայր լեզուներուն մեջ տեսնված ազգակցութլունն ու արմատական նմանութլունն՝ ինչպես հմուտ լեզվագետները կգտնեն, չէր կրնար ըլլալ (էջ 58)։ . . . Մայր լեզուները մեկ նախավոր ընդհանուր լեզվեն դուրս եկած ըլլալով . . . ամենքն ալ իրենց մեջ անոր հետքերը կպահեն. . . Յեղակից լե-զուները ժամանակներ անցնելով այլևայլութլուններ կրած ալ են նե՝ իրենց գլխավոր լեզվին տարրներն ու գլխավոր կերպարանքն չեն կորսըն-ցուցած» (էջ 62)։ Այդ պահպանված տարրերի շնորհիվ էլ, ահա, հնարավոր է դառնում երևան հանել տարբեր լեզուների՝ միմյանց հետ ունեցած կապը, նրանց ցեղակցութլունը։ Այստեղ հեղինակը հիշում է համեմատական լեզվա-բանութլյան հիմնական նվաճումը՝ «Հնդեվրոպական» լեզուների ցեղակցու-թյան հայտնադործումը։ Այս խնդրում, ի պատիվ հեղինակի պետք է ասել, նա հակադրվում է համեմատական լեզվարանութլյան առաջին (Բուպի) զըդ-րոցին ու հերքում այդ դպրոցի մի հիմնական դրույթը. ինչպես գիտենք, «հնդեվրոպական լեզուներին» համեմատական քերականութլյան հիմնադիրները այն կարծիքն էին արտահայտում, թե բոլոր «հնդեվրոպական լեզուներին» մայրն է սանսկրիտը։ Այդ տեսակետը հետագայում հերքվեց, Հոփսանյանն էլ, հիշելով այդ կարծիքը, որոշակի ասում է, որ այդ ճիշտ չէ. «Թեպետ և լեզվագետք հիմակ. . . սանսքրիտ լեզուն ամեն հնդկային-եվրոպական լե-զուներու մայր կսեպեն, բայց պետք չի այնպես կարծել որ ասոնք անկից

Յլած են, հապա՜ րե անիկա արտաճ կարգի հարստություն ու կատարելություն մ'ունենալով՝ ամեն ցեղակից լեզուներուն տարրերը մատնավոր կերպով մը կրթվանդակեա (էջ 40, ծան. 1)։ Այս տեսակետը, որ մեզ համար չափազանց պարզ և անհերքելի ճշմարտություն է, յուր ժամանակի համար մեծ նորութեան էր. պետք է հիշել, որ Շլաշիեի հայտնի «Compendium»-ը լույս է տեսել 1861—62 թվերին, այսինքն՝ Նոթանյանի գրքէջ չորս-հինգ տարի հետո։

Այդպես ընդունելով «Նեղեվրոպական լեզուներն» ցեղակցության խնդիրը, նույն տեղում հեղինակը խոսում է նաև հայերենի մասին և, թվարկելով «Նեղեվրոպական լեզուները», զրանց մեջ հիշում նաև հայերենը, որից և երևում է, թե նա ընդունում է հայերենի՝ «Նեղեվրոպական լեզուներին» ցեղակից լինելը. «Աշխարհքիս վրա հիմակ գտնվող լեզուներուն վրա աս զարուս մեջ եղած համեմատական ճիշտ զննությունները՝ հաքեթյան¹ ցեղերու... լեզվաց համար՝ միևնույն սկիզբն ըլլալնին ու իրարու հետ սերտ ազդակցություն ունենալնին հաստատուն օրինակներով ցուցցին. և հայտնի ըրին, որ սանաքրիտ կամ հին հնդկաց, հայոց, պարսից ու ժարաց, կեղտաց, զերմանացվոց, սլավաց, հունաց, լատինաց, ետրուսկացվոց ու լյուրիկացվոց (ինչպես ուրիշ քանի մը ազգաց ալ) լեզուները միևնույն լեզվի ճյուղեր կամ ծնունդներ են» (էջ 62—63)։ Այնուհետև հեղինակը տալիս է այդ լեզուների թվականների (1-ից մինչև 10) համեմատությունը, թվականներ, որոնց «նմանությունը կամ ազդակցությունը վերիվերու մտադրությամբ մ'ալ հայտնի կերևա ու խորունկ լեզվագետ չըլլողն ալ կտեսնեն» (էջ 66)։ Դժբախտաբար հեղինակը ոչինչ չի ասում հայերենի ունեցած գիրքի մասին. թվում է, թե ընդունում է լազարդի տեսակետը, քանի որ հայերենը միշտ սանսկրիտի ու պարսկերենի հետ է հիշում (հմտ. էջ 63 և 72)։ սակայն պարզ կերպով ոչ մի բան չի ասում այդ մասին։ Համենայն դեպս, զրքի հրատարակության ժամանակից դատելով (1857 թ.), կարող ենք ասել, որ այլ կերպ լինել չէր էլ կարող. ժամանակի տիրապետող տեսակետը այդ էր. ինչպես գիտենք, համեմատական լեզվաբանության առաջին շրջանում ընդունված էր այն տեսակետը, թե հայերենն իրանյան լեզուների մի զուտրն է (Պետերման, Վինդիշման, Բոպպ, Լազարդ և այլք)։ այդ տեսակետը հերքեց Նյուբրյանը 1875 թվին Kühn's Zeitschrift-ում տպված իր հոդվածով՝ և ապացուցեց, որ հայերենն անկախ «Նեղեվրոպական լեզու» է։ Նոթանյանը, թեև որոշակի չի արտահայտվում այդ մասին, բայց և այնպես եղած ականակներից էլ կարող ենք եզրակացնել, որ այս հարցում ընդունում է իր ժամանակի տիրապետող տեսակետը։ Այնուամենայնիվ դա միայն երկրորդական, իր աշխատության համար կողմնակի, մասնավորապես հայերենին վերաբերող հարց է։ Ընդհանուր լեզվաբանության տեսակետից կարևորն այստեղ այն է, որ նա ընդունում է «Նեղեվրոպական լեզուներն» ցեղակցությունը և հայերենն էլ մտցնում այդ լեզվաընտանիքի մեջ։

Առանձնապես կարևոր է հեղինակի տեսակետը լեզուների զարգացման

¹ Այդ անվամբ հեղինակը հասկանում է հնդեվրոպական ցեղերը. «Հաքեթյան լեզվաց բովանդակությունն առհասարակ հնդկային-եվրոպական կամ հնդկային-գերմանական կանվանի» (էջ 63)։

² Die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen, Kühn's Zeitschrift, XXIII (1875), S. 5—42.

մասին. կանգնած լինելով լեզվական երևույթների ըմբռնման գիտական հիմքի վրա, նա կարողանում է ճիշտ կերպով գիտել լեզվի պատմական բնույթը և լեզվի զարգացման պատմական ընթացքը: Հետևելով Շլեյերլին և Հումբոլդտին, Հոֆմանյանը լեզուների զարգացման ընթացքում տեսնում է երեք հաջորդական աստիճաններ և ըստ այդմ էլ բաժանում լեզուները երեք կարգի.

Ա) Անգաստական լեզուներ, որոնք ներկայացնում են լեզվի զարգացման ստորին աստիճանը. «Պինդ տռաջ տյն լեզուները մեր առջին կելեն՝ որոնց մեջ մտաց պարզ խորհուրդը պարզապես... միմիայն հնչյունով կրացառյալի՝ կարտարերվի: Լեզվի մը կազմությունն տյս աստիճանին ու սահմանին մեջ մեալով՝ միայն միտվանկ արմատներ կարտադրե և... աս պատճառով միավանկության, միավանկներու լեզու կանվանին» (էջ 66): Պատմական, աստիճանական զարգացման տեսակետից այդ լեզուները ներկայացնում են մարդկային լեզվի ճորինվածության պինդ ստորին աստիճանը» (էջ 68):

Բ) Կցական լեզուներ, որոնք թեև ներկայացնում են նախորդ աստիճանից ավելի բարձր աստիճանը լեզվի զարգացման իրավոր ստադիան, բայց դեռևս չեն հասել լեզուների զարգացման ամենաբարձր աստիճանին: Այդ կարգի լեզուներում թեև պետ և արմատներն ըստ մեծի մասին անկախ կան, բայց բառերուն իրարու հետ ունեցած հարաբերությունները նշանակելու համար՝ մասնավոր հնչյուններ (վանկեր, բառեր) կործանվին (էջ 69)։... Աս պատճառով տս երկրորդ աստիճանին կամ դասին մեջ ըլլող լեզուները կուսակալքյան՝ բարդալքյան լեզուներ կըսվին» (էջ 69):

Գ) Ինքնակա լեզուներ, որոնք ներկայացնում են լեզուների աստիճանական զարգացման ամենաբարձր ստադիան. զա է ճշգրիտ երրորդ դասը, որուն մեջ... արմատն ու կերպն իրարու հետ անբաժանելի միությամբ մը (ոգնեառնած) կապված ու միացած՝ մեկ եղած են: Հոս քերականական հարաբերությունն արմատին (բուն բառին՝ անունին) հետ ներքին կապակցությամբ միացալ բլլալուն՝ երկուքին ալ իրարմի բոժնվիլն տննարին է, ու իրարմի բաժնված գոյություն չեն կրնար (ունենալ)։... մեկ խոսքով ըսենք՝ բոլորն ալ գործարանավոր (= օրգանական) և։ Ա.) ու զաշնակավոր հոբինվածով գոյացող մարմինի մը նմանությունն ունին» (էջ 71):

Այսպես ընդունելով լեզուների պատմական զարգացման տարբեր աստիճանները և բնորոշելով այդ աստիճաններն ըստ լեզուների ձևաբանական կառուցվածքի, Հոֆմանյանը ճիշտ կերպով լուծում է նաև մասնիկների առաջացման հարցը: Մասնիկները նախապես եղել են անկախ, ինքնուրույն բառեր, որոնք ժամանակի ընթացքում կորցնելով իրենց անկախ իմաստը, զրկվելով ինքնուրույն գործածությունից ու սփռվելով, վերածվել են մասնիկների. «Աս՝ քերականական հարաբերությունները բացահայտող՝ հոնչյուններն սկզբնաբար ըստ մեծի մասին ուրիշների անկախ բառեր էին, բայց կամաց կամաց լեզուն իր հարինվածությանը մեջ հառաջ երթալով՝ անոնց հասուկ նշանակությունն անհայտ ու անհետ եղած է, նաև նույնիսկ իրենք (հնչյուններն) ալ երևելի փոփոխություններ կրելով, ալ իբր այնպիսի հնչյուն չեն կրնար ճանչցվիլ» (էջ 69): Իսկ վերաբերում է հոլովման ու խոնարհման վերջավորություններին, այսպես կոչված բառահարաբերական մասնիկներին, ապա հեղինակն այստեղ էլ ճիշտ կերպով գիտում է, որ

նրանք էլ ստացվել են ղեկառնողներից. «Հորովական կամ փոփոխվելու գործընթացները բառերու միությունը հառաջ կբերեն, ու այն նուրբ, անոսր ու իրրի ոգեկան մասնիկներն՝ որոնք աս միավորությունը կամ միությունը կկառարեն՝ ըստ մեծի մասին ղեկառնողական բունքի կամ արժատներ են» (էջ 71)։ Սրանց գույքընթաց հեղինակը գանուժ է նաև, որ մասնիկները կարող են առաջանալ ոչ միայն ինքնուրույն, արժատական բառերից, այլ և կարող են սկզբից եկել կամ լինել առանձին հնչյուններ, որոնք անկախ, ինքնուրույն բառեր չեն եղել, այլ ի բնե եղել են մասնիկներ։ «Եւ այց աւսոնց շատն ալ միայն բառերուն սկիզբը, մեջն ու վերջը գեանդված գոգված մասնիկներ են, որոնք երբեք իրենք իրենցմե՝ կամ ուրիշն անկախ գոյություն չեն ունեցած» (էջ 69)։ Ոհարկե, այս անսակետը վիճելի պետք է համարել։ Կարելի է թերևս բնորոշել, որ յառի մեջ կատարված հնչյունական փոփոխությունը, կամ որևէ հնչյունի «պատահական» հավելումն առաջ բերի իմաստային որոշ տարբերակում և ապա՝ համարանություն (անալոգիայի) շնորհիվ տարածվելով նաև ուրիշ այդ կարգի բառերի վրա, ընդհանրացում սուսնա ու մասնիկ դառնալ¹։ Բայց այդ պետք է դիտել իբրև մասնակի երևույթ, իբրև մասնիկների առաջացման երկրորդական միջոց։ Վերջապես հեղինակը մի վերջին զխոյժ քննում ու նկարագրում է նոր, ազգային լեզուների առաջացումն ու զարգացումը. այս հարցում էլ հեղինակը հետևում է յուր ժամանակի նվրուպական լեզվաբանությանը՝ հնդեվրոպարանությունը, Սկզբային լեզուները, ինչպես ասում է հեղինակը, ստացվել են հին դասական լեզուներից՝ նրանց աստիճանական զարգացման շնորհիվ։ Այս զխոյժ առանձնապես ուշագրավ է լեզուների փոխազդեցության խնդիրը, որին հեղինակը հատուկ նշանակություն է տալիս։ Իրենց զարգացման ընթացքում լեզուները միմյանց հետ շարունակական շփման մեջ լինելով՝ իրարից փոխադարձաբար ազդվում են. լեզվական փոխազդեցությունները յուրաքանչյուր լեզվի հարստացման կարևոր աղբյուրներից մեկն են։ «Մեկ ժողովրդյան՝ կամ ցեղի մը հատուկ բարբառը... իրեն ազգակից ու զրացի ըլլող ժողովրդյան բարբառեն իրեն պակասձն ասնելով հարստություն մը կստանա» (էջ 106)։

Սրանք են, ահա, այն հիմնական դրույթները, որ արտահայտել է Հ. Գ. Հովհանյանը յուր գրքում։ Ամփոփելով այդ բոլորն ի մի՝ պալիս ենք հետևյալ եզրակացության։ Հովհանյանն առաջին հայ լեզվաբանն է, որ հետևելով Նվրուպյում լեզվաբանության մեջ կատարված հայտնադործումներին՝ ինքն էլ հետևեց այդ նոր լեզվաբանական ուղղությանը՝ համեմատական լեզվաբանությանը և իր աշխատությամբ հայերին հաղորդակից դարձրեց իր ժամանակի նվրուպական գիտության նվաճումներին։ Լեզվի փիլիսոփայական հարցերում, որոնց էլ նվիրված է գիրքը, Հովհանյանը հետևում է Հումբոլդտին։ Վերջինիս տեսության հետևությամբ է գրել նա յուր աշխատությունը. հեղինակի համար լեզուն ոգու գործունեության արդյունքն է, ինչպես Հումբոլդտի մոտ։ Այդ գործունեությունն էլ իր հերթին աստվածային գնելիչնչման արդյունքն է. լեզուն մարդկանց՝ իրար հետ հաղորդակցելու միջոց է. իբրև այդպիսին էլ նա հասարակությունից

¹ Հմմտ. Գ. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, 11 մաս, Երևան, 1930, էջ 205—209.

դուրս գոյութիւն ունենալ չի կարող, հետեւաբար՝ նա մարդկային հասարակութեան յուրահատուկ նվաճումն է, հատուկ ստեղծարարութիւնը: Լեզվի մեջ ամփոփւած են ցեղի (ազգի, ժողովրդի) ստեղծութիւններուն բովանդակութիւնը, ամեն խորհուրդները կամ մտածութիւններն ու... զգացմունքը»։ Հատուկ ուշադրութեան է արժանի հեղինակի տեսակետը լեզվի զարգացման նկատմամբ. այստեղ հեղինակը ճիշտ կերպով կարողանում է դիտել լեզվի դիալեկտիկան, և այս նրա մեծագույն արժանիքն է։ Ընդհանրապէս զարգացման ընթացքում լեզուն անցնում է երեք հաջորդական աստիճան. իսկ այս սկզբունքը, ինչպես դիտենք, Մարի ուսմունքի հիմնաքարն է հանդիսանում։ Ճիշտ է, վերջինս այդ աստիճանական զարգացումը մի նոր տեսանկյունով է դիտում. բայց ինչ էլ որ լինի, հենց այդ երեք թիւերը ճշգրիտ դիտումն էլ մեծ պատժի է արժանացնում Հովնաթանին։ Վերջապես, ընդունելով լեզվի զարգացման պատմական ընթացքը՝ հեղինակը ճիշտ կերպով լեզուն համարում է մարդկային հասարակութեան պատմութեան ուսումնասիրութեան աղբյուրներից մեկը։ Այդ սկզբունքի արժեքն ու ճշտութիւնը պատկերացնելու համար բավական է հիշել Գրիմի այն խոսքերը, թե՛ «մեր լեզուն նաեւ մեր պատմութիւնն է» կամ՝ Հոմերոսի այն գրութիւնը, թե՛ «կուստուրայի ամեն մի վիճակն արտահայտւում է նաեւ լեզվի մեջ»։ Սակայն այս միանգամայն արժեքավոր սկզբունքներին դուրսնալիս հեղինակն ունի նաեւ իր սխալ գրութիւնները։ Դրանցից առաջին հերթին պետք է հիշել այն հակասութիւնը, որ գտնում ենք նրա մոտ լեզվի ծագման ու զարգացման հարցում։ Մի տեղ ասելով, որ լեզուն ձեռքբերովի է, «արհեստական հորինված մըն է», մի այլ տեղ ավելացնում է, թե մարդկային միտքը չէր կարող լեզու ստեղծել. «Լեզվին կամ խոսքին դոյութիւնն... բնութեան արարչն արված տուրք մըն է։ Լեզվաց սքանչելի կազմութիւնը մարդկային միտքն իր ըզրոր սրութեամբն ու ճարտարութեամբը չէր կրնար հանճարեղ կամ հնարագետ ճամբով մը ստանալ» (էջ 20)։ Այնուհետեւ, ընդունելով լեզվի պատմական զարգացումը և հանգամանորեն նկարագրելով տարբեր աստիճաններն ու հիմնավորելով այդ, միաժամանակ ասում է, թե լեզուները հիմնական, էական փոփոխութիւնների ենթակա չեն. լեզուների «մեջ էական փոփոխութիւններ ընեն, իրենց սկզբնական դոյութեան ատեն ընդունած կերպին ներհակ կերպ մը իրենց տալը հնարավոր չէ» (էջ 82)։ «... Ով որ կդնե, թե լեզու մը աստիճան աստիճան հառաջ պացած հորինված է, կամ կկարծե՛ որ դարերու կարոտ եղած է՝ մինչև քերականական կատարելութեան հասնի, բոլորովին փորձո գեմ. կխոսի» (էջ 84)։ Ինչպես տեսնում ենք, հակասութիւնն ակնբախ է. բայց այդ հակասութիւնների պատճառը մենք վերը պարզեցինք արդեն։ Մի մարդ, որ հարկադրաբար պետք է հաշտեցնել զիտութիւնը կրօնի հետ, չէր կարող խուսափել այդ կարգի հակասութիւններից. այդ, ինչպես ասացինք, ժամանակի ու կրօնական կոչման տուրքն էր. որ այդ այդպէս է, ապացուցւում է այն բանով իսկ, որ մինչդեռ իր ճիշտ սկզբունքները նա մանրամասնորեն բացատրում ու հիմնավորում է, այս կարգի կրօնական խոստովանութիւնները ակնարկով միայն հիշում և անցնում է։ Վերջապես հիմնական թերութիւնն է նաեւ հասարակութեան մասին նրա ունեցած թիւեր ըմբռնումը, որ արդունք է արդեն ոչ թե յուր կրօնական կոչման, այլ ուղղակի յուր փիլիսոփայական ուղղութեան. հեղինակի մոտ մարդկային հասարակութիւնն իրեն ստեղծ-

ված, նախապես սահմանված՝ մարդկանց սոսկական խմբակցություն է և ոչ՝ արտադրական հարաբերությունների վրա հիմնված պատմական կրտսեղորիա: Այդպես էլ լեզվի զարգացումը նա ղիտում ու բացատրում է իդեալիստական դիալեկտիկայի հիմունքներով: Նա, ինչպես և Հումբոլդտը, որին հետևում է ինքը, գտնում է, որ մարդկային լեզուն իր ստեղծմամբ ու զարգացմամբ պայմանավորված է ոգու զգացման և անձանոթի գործունեությամբ:

Այդ թերությունները, սակայն, ինչպես ասել ենք, չեն նսեմացնում զրբի արժեքը: Իր ժամանակի հետ համեմատած՝ նրա մեջ գտնվող ճիշտ զրույթներն աշխարհ արժեքավոր են, որ այդ թերությունները ոչնչի են հավասարվում նրանց համեմատությամբ: Հ. Պ. Հոֆմանյանը առաջին հայ լեզվաբան փիլիսոփան է, նա է, որ հայ իրականության մեջ առաջին անգամ լուրջ ու ղիտական կերպով ուսումնասիրել է լեզվի ծագման ու զարգացման ընդհանուր տեսական, փիլիսոփայական հարցերը: Հայ իրականություն մեջ նա լեզվի փիլիսոփայության հիմնադիրն է և, իբրև այդպիսին էլ, արժանի է լուրջ ուշադրության: